



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 մարտի 2025 թվականի N 25-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՐԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱՎԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 27-
ի հերթական նիստի օրակարգը՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում մասնակցային
բյուջետավորման գործընթաց սկսելու մասին,
2. Գերմանական միջազգային համագործակցության ընկերության կողմից
գործադրվող տեղական զարգացման հիմնադրամի շրջանակներում դրամաշնորհային
մրցույթին մասնակցելուն և համաֆինանսավարումը ապահովելուն համաձայնություն
տալու մասին,
3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում հանրային
հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը և ձևը
հաստատելու մասին,
4. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականությանը
պատկանող հողամասերը վարձակալության իրավունքով օգտագործման
տրամադրելու մասին,
5. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի վարչական
տարածքում ընդգրկվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերը
վարձակալության տրամադրմանը համաձայնություն տալու մասին,
6. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի Մեծավան գյուղի
«Գույների աշխարհ» մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային
կազմակերպությանը գույք ամրացնելու մասին,

7. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը գույք ամրացնելու մասին,
8. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին,
9. Փոխադրամիջոցների գույքահարկի արտոնություն սահմանելու մասին,
10. « Ես » կրթական հիմնադրամի շրջանակներում «Մունք» տեխնոդպրոցի կողմից իրականացվող ծրագրին մասնակցելուն և համաֆինանսավարումը ապահովելուն համաձայնություն տալու մասին,
11. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառավարման 2025 թվականի (ամենամյա) ծախսերը հաստատելու մասին,
12. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի N131-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին,
13. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին,
14. Եվրոպայի խորհրդի կողմից ֆինանսավորվող «Ժողովրդավարական զարգացում, ապակենտրոնացում և լավ կառավարում Հայաստանում – փուլ 2» ծրագրով իրականացվող «Կամրջվող համայնքներ ավելի մաքուր քաղաքների համար » դրամաշնորհային ծրագրի հաշտը հաստատելու և համաֆինանսավարումը ապահովելուն համաձայնություն տալու մասին

Կողմ -13

Դեմ -0

Ձեռնպահ -0

Վ.ԱՆԱԽԱՍՅԱՆ

Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հ. ՄԱՐԴՈՅԱՆ

Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

Զ. ՊՈՂՈՍՅԱՆ

Ա. ՍՈԼՈՅԱՆ

Է. ՍՈՂՈՅԱՆ

Ա.ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Վ. ՍԵՓԱՆՅԱՆ

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ի. ՏՈՄԵՅԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝**



Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

2025 մարտի 27

ք. Տաշիր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 մարտի 2025 թվականի N 26-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, 11-րդ հոդվածով, 13-րդ հոդվածի 10-րդ մասով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքում սկսել 2025թ-ի մասնակցային բյուջետավորման գործընթաց:
2. ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի 2025թվականի բյուջեում կատարել փոփոխություն և հատկացնել 7000000 (յոթ միլիոն) ՀՀ դրամ գումար՝ 2025թվականի ընթացքում մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնելու նպատակով:
3. Յուրաքանչյուր առաջարկ-նախագծի իրականացման համար սահմանել առավելագույն սահմանաչափ՝ 3500000 (երեք միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:
4. Սահմանել մասնակցային բյուջետավորման առաջարկների նախնական գնահատման աղյուսակի ձևաթուղթը՝ համաձայն հավելվածի:
5. Սահմանել, որ քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցողների առնվազն մեկ տոկոսի կողմ ձայների դեպքում առաջարկ-նախագիծը համարվում է հաղթած:
6. Համայնքի ղեկավարին՝
 - 1) սույն որոշման 1-ին կետում սահմանված գործընթացը՝ օրպես ծրագրային բաղադրիչ, ներառել համայնքի 2025թվականի ՄԺԾԾ-ում, տարեկան աշխատանքային պլանում և բյուջեում,
 - 2) համայնքի բնակիչների կողմից քվեարկության արդյունքում ընտրված առաջարկը(ները) ներկայացնել ավագանուն,
 - 3) իրականացնել վերահսկողություն մասնակցային բյուջետավորման գործընթացի նկատմամբ:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -13

Դեմ -0

Ձեռնպահ -0

Վ.ԱՆԱԽԱՍՅԱՆ

Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հ. ՄԱՐԴՈՅԱՆ

Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

Ջ. ՊՈՂՈՍՅԱՆ

Ա. ՍՈԼՈՅԱՆ

Է. ՍՐՂՈՅԱՆ

Ա.ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ի. ՏՈՄԵՅԱՆ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝

Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

2025 մարտի 27

ք. Տաշիր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ԾԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 մարտի 2025 թվականի N 27-Ա

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ ԳՈՐԾԱԴՐՎՈՂ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒՆ ԵՎ
ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎԱՐՈՒՄԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով, 13-րդ հոդվածի 10-րդ մասի կարգավորումներով՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է.

- Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի մասնակցությանը Գերմանական միջազգային համագործակցության ընկերության կողմից գործադրվող «Տեղական զարգացման հիմնադրամ»-ի շրջանակներում դրամաշնորհային մրցույթին:
- Համաձայնություն տալ դրամաշնորհային մրցույթին ներկայացվող ծրագրային հայտ-առաջարկի հաստատման դեպքում Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի 2025 թվականի բյուջեից կատարել համապատասխան համաներդրմանը:

Կողմ -13

Դեմ -0

Ձեռնպահ -0

Վ.ԱՆԱԽԱՍՅԱՆ
Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ
Հ. ՄԱՐԴՈՅԱՆ
Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Զ. ՊՈՂՈՍՅԱՆ
Ա. ՍՈԼՈՅԱՆ
Է. ՍՈՂՈՅԱՆ
Ա.ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ
Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Ի. ՏՈՄԵՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱՆ՝

2025 մարտի 27

ք. Տաշիր



Ն ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 մարտի 2025 թվականի N 28-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ
ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ
ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և 36-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով, «Հավաքների ազատության մասին» օրենքի 15-րդ հոդվածի պահանջներով՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել՝

- 1) Համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի:
- 2) Համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:

Կողմ -12

Դեմ -0

Ձեռնպահ -1

Վ. ԱՆԱԽԱՍՅԱՆ

Զ. ՊՈՂՈՍՅԱՆ

Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հ. ՄԱՐԴՈՅԱՆ

Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

Ա. ՍՈԼՈՅԱՆ

Է. ՍՈՂՈՅԱՆ

Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ի. ՏՈՄԵՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝

Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ



2025 մարտի 27
ք. Տաշիր

Կ Ա Ր Գ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ
ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ
ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ**

1. Սույն կարգով կարգավորվում են ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքում հանրային հավաքներ անցկացնելու իրազեկումների գրանցամատյանի **(այսուհետ՝ գրանցամատյան)** վարման հետ կապված հարաբերությունները:
2. Գրանցամատյանը համայնքի վարչական տարածքում հավաքներ անցկացնելու վերաբերյալ «Հավաքների ազատության մասին» օրենքով սահմանված կարգով Տաշիր համայնքի ղեկավարին (այսուհետ՝ լիազոր մարմին) ներկայացրած գրանցված իրազեկումների վերաբերյալ և լիազոր մարմնի կամ նրա լիազորած անձի կողմից ձեռնարկված քայլերի մասին տեղեկությունների ամբողջականությունն է:
3. Գրանցամատյանը խիստ հաշվառման հատուկ մատյան է, տպագրվում է մեկ օրինակից, վարվում է թղթային տարբերակով:
4. Գրանցամատյանի պահպանումը և վարման պարտականություններ իրականացվում է լիազոր մարմնի կողմից լիազորած անձի պատասխանատվությամբ և այն պետք է սահմանված լինի համապատասխան իրավական ակտով (որոշում, կարգադրություն):
5. Գրանցամատյանը կարում, էջերը հերթական համարակալմամբ համարակալում, վերջին էջում էջերի քանակը՝ տառերով և թվով, այն կազմելու օրը, ամիսը, տարին նշում և ստորագրությամբ և կնիքով վավերացնում է՝ համայնքի աշխատակազմի քարտուղարը:
6. Հանրային հավաքներ անցկացնելու մասին լիազոր մարմնին ներկայացված իրազեկումները անհապաղ գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ դրանք ստանալու հերթականության: Մուտքագրման համարը գրառվում է նաև ներկայացված իրազեկման փաստաթղթի վրա: Յուրաքանչյուր տարվա գրանցումների համարակալումը կատարվում են տարեսկզբից: Յուրաքանչյուր օրացուցային տարվա համար համարակալումը սկսվում է 1-ից:

7. Գրանցամատյանը ըստ սյունակների լրացվում է հետևյալ ձևով՝

1) 1-ին սյունակում թվերով գրառվում է իրազեկման մուտքագրման հերթական համարը.

2) 2-րդ սյունակում գրառվում է հավաքի անցկացման մասին իրազեկումը լիազոր մարմնի աշխատակազմում մուտքագրելու օրը, ամիսը, տարեթիվը, ժամը.

3) 3-րդ սյունակում գրառվում է իրազեկման ներկայացման ձևը՝ գրավոր՝ անձամբ կամ փոստով.

4) 4-րդ սյունակում գրառվում է հավաքի կազմակերպչի (կազմակերպիչների) և ղեկավարի տվյալները՝ անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի տվյալները, հեռախոսահամարները, փոստային և էլեկտրոնային հասցեները.

5) 5-րդ սյունակում գրառվում է հավաքի տեսակը՝ հավաք կամ երթ կամ հավաք և երթ.

6) 6-րդ սյունակում գրառվում է հավաքի վայրը.

7) 7-րդ սյունակում գրառվում է հավաքի, սկզբի և ավարտի մոտավոր ժամանակը.

8) 8-րդ սյունակում գրառվում է հավաքի նպատակը.

9) 9-րդ սյունակում գրառվում է մասնակիցների սպասվող թիվը.

10) 10-րդ սյունակում գրառվում է երթի ուղին և ժամանակացույցը, եթե նախատեսված է երթի անցկացում, այլապես անհրաժեշտ է կատարել գծանշում.

11) 11-րդ սյունակում գրառվում են՝ հավաքի անցկացման ժամանակ օգտագործվելիք առարկաների կամ տեխնիկական միջոցների (պաստառներ, ջահեր, բարձրախոսներ և այլն), կարգադրիչների նախատեսվող թվի, վարձակալությամբ տրված տարածքներում վարձակալի համաձայնության, իրավաբանական անձի կողմից հավաք կազմակերպվելու դեպքում՝ իրավաբանական անձի ղեկավար մարմնի կամ կառավարման մարմնի որոշման վերաբերյալ և այլ տեղեկությունները.

12) 12-րդ սյունակում գրառվում է ներկայացված իրազեկման պատճենը լիազոր մարմնի նստավայրում բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում փակցնելու օրը, ամիսը, տարեթիվը, ժամը.

13) 13-րդ սյունակում գրառվում է ներկայացված իրազեկման պատճենը համայնքի համացանցային կայքէջում տեղադրելու օրը, ամիսը, տարեթիվը.

14) 14-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից հավաքի անցկացման վերաբերյալ կարծիք ստանալու նպատակով ՀՀ ոստիկանությանը ուղարկված իրազեկման գրության համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը.

15) 15-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից հավաքի անցկացման վերաբերյալ կարծիք ստանալու նպատակով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը ուղարկված իրազեկման գրության համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը, եթե նախատեսված է հավաքը անցկացնել պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների, թանգարանների ու գրադարանների տարածքում կամ դրանց անմիջական հարևանությամբ նախատեսված վայրում, այլապես անհրաժեշտ է սյունակում կատարել գծանշում.

16) 16-րդ սյունակում գրառվում է հավաքի անցկացման վերաբերյալ ՀՀ ոստիկանությունից ստացված կարծիքը, գրության համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը.

17) 17-րդ սյունակում գրառվում է հավաքի անցկացման վերաբերյալ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից ստացված կարծիքը, գրության համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը, եթե լիազոր մարմինը հավաքի անցկացման վերաբերյալ կարծիք ստանալու նպատակով դիմել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը, այլապես անհրաժեշտ է սյունակում կատարել գծանշում.

18) 18-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից իրազեկման քննարկման օրը, ամիսը, տարեթիվը.

19) 19-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից հավաքի անցկացման վերաբերյալ լսումներ անցկացնելու օրը, ամիսը, տարեթիվը.

20) 20-րդ սյունակում գրառվում է հավաք անցկացնելու մասին լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման համարը, օրը, ամիսը, տարեթիվը, բովանդակությունը.

21) 21-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման մասին հավաքի կազմակերպիչներին տեղեկացնելու օրը, ամիսը, տարեթիվը.

22) 22-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշումը հավաքի կազմակերպիչներին հանձնելու ձևը (պատվիրված

փոստով՝ ստանալու մասին ծանուցմամբ կամ կազմակերպչին՝ առձեռն հանձնելու միջոցով), օրը, ամիսը, տարեթիվը.

23) 23-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման մասին ՀՀ ոստիկանությանը տեղեկացնելու օրը, ամիսը, տարեթիվը, ժամը.

24) 24-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման մասին գրությունը լիազոր մարմնի նստավայրում բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում փակցնելու օրը, ամիսը, տարեթիվը.

25) 25-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշումը համայնքի համացանցային կայքէջում տեղադրելու օրը, ամիսը, տարեթիվը.

26) 26-րդ սյունակում գրառվում է այո կամ ոչ՝ լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշումը դատական կարգով բողոքարկելու մասին.

27) 27-րդ սյունակում գրառվում է դատարանի վճռի համարը, օրը, ամիսը, տարեթիվը, հակիրճ բովանդակությունը, եթե լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշումը դատական կարգով բողոքարկվել է, այլապես անհրաժեշտ է սյունակում կատարել գծանշում:

**ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ
ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՁԵՎ**

ՍԿՍՎԱԾ Է՝

(օրը, ամիսը, տարին)

ԱՎԱՐՏՎԱԾ Է՝

(օրը, ամիսը, տարին)



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 մարտի 2025 թվականի N 29-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածով, 76-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, 94-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշումով հաստատված կարգի 8-րդ գլխի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը մրցույթով՝ վարձակալության իրավունքով, տրամադրել օգտագործման:
2. Սահմանել հողամասերի վարձակալության վճարի մեկնարկային գները՝ համաձայն հավելվածի:

Կողմ -13

Դեմ -0

Ձեռնպահ -0

Վ.ԱՆԱԽԱՍՅԱՆ

Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հ. ՄԱՐԴՈՅԱՆ

Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

Զ. ՊՈՂՈՍՅԱՆ

Ա. ՍՈԼՈՅԱՆ

Է. ՍՈՂՈՅԱՆ

Ա.ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Վ. ՍԵՓԱՆՅԱՆ

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ի. ՏՈՄԵՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝

2025 մարտի 27

ք. Տաշիր



Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու

2025 թվականի մարտի 27-ի թիվ 29-Ա որոշման

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականությանը պատկանող
հողամասերը վարձակալության իրավունքով օգտագործման տեղեկագրերի մեկնարկային գիները ու պայմանները

Հ/հ	Հողամասի գտնվելու վայրը	Հողամասի ծածկագիրը	Հողամասի նպատակային նշանակությունը	Հողամասի գործառնական նշանակությունը	Հողամասի չափը (հա)	վարձակալության ժամկետ	Հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ սերվիտուտների) առկայությունը	Մեկնարկային գինը (դրամ)
1	Տաշիր համայնք, ք. Տաշիր,	06-008-0517-0065	Գյուղատնտեսական	Խոտհարք	11,612071	10 տարի	Չկա	121000
2	Տաշիր համայնք, գ. Բլագոդարնոյե,	06-024-0108-0022	Գյուղատնտեսական	Վարելահող	26,78611	10 տարի	Չկա	279000
3	Տաշիր համայնք, գ. Բլագոդարնոյե,	06-024-0101-0111	Գյուղատնտեսական	Խոտհարք	2,42406	10 տարի	Չկա	26000
4	Տաշիր համայնք, գ. Բլագոդարնոյե,	06-024-0101-0110	Գյուղատնտեսական	Խոտհարք	8,16581	10 տարի	Չկա	85000
5	Տաշիր համայնք, գ. Բլագոդարնոյե,	06-024-0101-0109	Գյուղատնտեսական	Խոտհարք	8,94935	10 տարի	Չկա	94000

6	Տաշիր համայնք, գ. Բլագոդարնոյե,	06-024-0101-0108	Գյուղատնտեսական	Խոտհարք	1,98184	10 տարի	2կա	21000
7	Տաշիր համայնք, գ. Բլագոդարնոյե,	06-024-0101-0107	Գյուղատնտեսական	Խոտհարք	3,24195	10 տարի	2կա	34000
8	Տաշիր համայնք, գ. Բլագոդարնոյե,	06-024-0101-0106	Գյուղատնտեսական	Խոտհարք	2,45375	10 տարի	2կա	26000
9	Տաշիր համայնք, գ. Բլագոդարնոյե,	06-024-0101-0105	Գյուղատնտեսական	Խոտհարք	2,40973	10 տարի	2կա	26000
10	Տաշիր համայնք, գ. Բլագոդարնոյե,	06-024-0101-0104	Գյուղատնտեսական	Խոտհարք	6,4334	10 տարի	2կա	67000
11	Տաշիր համայնք, գ. Բլագոդարնոյե,	06-024-0101-0103	Գյուղատնտեսական	Խոտհարք	2,55603	10 տարի	2կա	27000
12	Տաշիր համայնք, գ. Բլագոդարնոյե,	06-024-0101-0102	Գյուղատնտեսական	Խոտհարք	3,30084	10 տարի	2կա	35000
13	Տաշիր համայնք, գ. Բլագոդարնոյե,	06-024-0101-0101	Գյուղատնտեսական	Խոտհարք	5,33181	10 տարի	2կա	56000

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝



Ն. ՍՈԼՈՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 մարտի 2025 թվականի N 30-Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ, ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆԸ
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածով, 76-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, 94-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N16-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ գլխի պահանջներով՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

- 1.Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի վաչական տարածքում ընդգրկվող, պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերի վարձակալության տրամադրմանը:
2. Սահմանել հողամասերի վարձակալության վճարի մեկնարկային գները՝ համաձայն հավելվածի:
3. Տաշիր համայնքի ղեկավարին՝ պատրաստել հողաշինարարական գործ և ներկայացնել ՀՀ Լոռու մարզպետին՝ համապատասխան եզրակացություն ստնալու նպատակով:

Կողմ -13

Դեմ -0

Ձեռնպահ -0

Վ.ԱՆԱԽԱՍՅԱՆ

Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հ. ՄԱՐԴՈՅԱՆ

Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

Զ. ՊՈՂՈՍՅԱՆ

Ա. ՍՈԼՈՅԱՆ
Է. ՍՈՐՈՅԱՆ
Ա.ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ
Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Ի. ՏՈՄԵՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝

[Handwritten signature]

Ն ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ



2025 մարտի 27
ք. Տաշիր

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականության մեկնարկային վարձավճարի չափն ու պայմանները

ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու
2025 թվականի ՄԱՐՏի 27-ի N 30-Ա որոշման
Հավելված

Հ/հ	Հողամասի գտնվելու վայրը	Հողամասի ծածկագիրը	Հողամասի նպատակային նշանակությունը	Հողամասի գործառնական նշանակությունը	Հողամասի չափը (հա)	Վարձակալության ժամկետ	Հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերվիտուտների) առկայությունը	Օտարման գինը (դրամ)
1	Տաշիր համայնք, գ. Դաշտադեն	06-032-0606-0003	Գյուղատնտեսական	Խոտհարք	3,0065	10 տարի	Չկա	8500
2	Տաշիր համայնք, գ. Դաշտադեն	06-032-0606-0005	Գյուղատնտեսական	Արոտավայր	8,83736	10 տարի	Չկա	25000
3	Տաշիր համայնք, գ. Դաշտադեն	06-032-0607-0001	Գյուղատնտեսական	Արոտավայր	34,97569	10 տարի	Չկա	98000
4	Տաշիր համայնք, գ. Դաշտադեն	06-032-0610-0004	Գյուղատնտեսական	Խոտհարք	9,32044	10 տարի	Չկա	27000
5	Տաշիր համայնք, գ. Դաշտադեն	06-032-0610-0007	Գյուղատնտեսական	Խոտհարք	14,36667	10 տարի	Չկա	41000
	Տաշիր համայնք, գ. Մեղվափոխ	06-076-0557-0002	Գյուղատնտեսական	Արոտավայր	292,15288	10 տարի	Չկա	819000

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ն. ՍՈԼՈՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 մարտի 2025 թվականի N 31-Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵԾԱՎԱՆ ԳՅՈՒՂԻ « ԳՈՒՅՆԵՐԻ ԱՇԽԱՐՀ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՋ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՅՔ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21 կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածով՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի Մեծավան գյուղի «Գույների աշխարհ» մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գ.Մեծավան, Զ.Անդրանիկի փողոց, թիվ 38 հասցեում գտնվող մանկապարտեզի շենքը՝ 1063,5քմ մակերեսով, և դրա սպասարկման համար անհրաժեշտ 0,6 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառույցատման հողամասը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -13

Դեմ -0

Ձեռնպահ -0

Վ.ԱՆԱԽԱՍՅԱՆ

Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հ. ՄԱՐԴՈՅԱՆ

Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

Զ. ՊՈՂՈՍՅԱՆ

Ա. ՍՈԼՈՅԱՆ

Է. ՍՈՂՈՅԱՆ

Ա.ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Վ. ՍԵՓԱՆՅԱՆ

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ի. ՏՈՄԵՅԱՆ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝

(Handwritten signature)

Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

2025 մարտի 27
ք. Տաշիր

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
 Տաշիր համայնքի ավագանու
 2025 թվականի մարտի 27-ի N 31-Ա որոշման

Հ/հ	Անվանում, սեփականության իրավունքի վկայականի համարը	Քանակը	Համախառն հաշվեկշռային արժեք	Կուտակված մաշվածություն	Հաշվեկշռային արժեք
1	ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գ. Մեծական Զ. Անդրանիկի փողոց, թիվ 38շենք 10032025-06-0067	57 657 703,00	25 934 399,22	31 723 303,78	57 657 703,00
2	ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք գ. Մեծական Զ. Անդրանիկի փողոց, թիվ 38 հողամաս 10032025-06-0067	552 780,00	0,00	552 780,00	552 780,00
Ընդամենը		2	25 934 399,22	32 276 083,78	58 210 483,00



ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ն. ՍՈԼՈՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 մարտի 2025 թվականի N 32-Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ՄԱՆԿԱԴԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ » ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՅՔ ԱՄՐԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21 կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածով՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1.«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գ.Մեծավան, Չարենցի փողոց, թիվ 4/2 հասցեում գտնվող մարզադահլիճի շենքը՝ 376,5քմ մակերեսով, պարիսպը՝ 1,2 քմ մակերեսով, պարիսպը՝ 11,2 քմ մակերեսով, 3 քմ մակերեսով պարիսպը և դրանց սպասարկման համար անհրաժեշտ 0,42804 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառույցատման հողամասը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -13

Դեմ -0

Ձեռնպահ -0

Վ.ԱՆԱԽԱՍՅԱՆ

Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հ. ՄԱՐԴՈՅԱՆ

Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

Զ. ՊՈՂՈՍՅԱՆ

Ա. ՍՈԼՈՅԱՆ

Է. ՍՈՂՈՅԱՆ

Ա.ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Ի. ՏՈՄԵՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝

[Handwritten signature]

Ն ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ



2025 մարտի 27
ք. Տաշիր

Հավելված
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Տաշիր համայնքի ավագանու
2025 թվականի մարտի 27-ի N 32-Ա որոշման

Հ/հ	Անվանում, սեփականության իրավունքի վկայականի համարը	Քանակը	Համախառն հաշվեկշռային արժեք	Կուտակված մաշվածություն	Հաշվեկշռային արժեք
1	ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գ. Մեծավան Չարենցի փողոց, թիվ 4/2 շենք 13012025-06-0022	1	83 500 000,00	4 175 000,00	79 325 000,00
2	ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք գ. Մեծավան Չարենցի փողոց, թիվ 4/2 հողամաս 13012025-06-0022	1	393 797,00	0,00	393 797,00
Ընդամենը		2	83 893 797,00	4 175 000,00	79 718 797,00



ԱՇԽԱՏԱՎԱԶՄԻ ՔԱՐՏԻՊՈՐՏ

Ն. ՍՈԼՈՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 մարտի 2025 թվականի N 33-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով 2025 թվականի հունվար-փետրվար ամիսներին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցում ստացած թվով 85 հողակտորների վկայականները՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները՝ համաձայն հավելվածի:

Կողմ -13

Դեմ -0

Ձեռնպահ -0

Վ.ԱՆԱԽԱՍՅԱՆ

Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հ. ՄԱՐԴՈՅԱՆ

Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

Զ. ՊՈՂՈՍՅԱՆ

Ա. ՍՈԼՈՅԱՆ

Է. ՍՈՂՈՅԱՆ

Ա.ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Վ. ՍԵՓԱՆՅԱՆ

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ի. ՏՈՄԵՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝

Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ



2025 մարտի 27
ք. Տաշիր

Հավելված

ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու

2025 թվականի մարտի 27-ի N 33-Ա որոշում

Հ/հ	Կադաստրային ծածկագիր	Հողատեսք, գործառնական նշանակություն	Մակերես / հա
1	06-074-0247-0029	վարելահող	0.2221
2	06-074-0236-0133	վարելահող	0.5717
3	06-074-0379-0148	վարելահող	0.5
4	06-100-0112-0003	վարելահող	0.2343
5	06-039-0129-0014	վարելահող	0.166
6	06-100-0150-0060	վարելահող	0.31
7	06-100-0111-0006	վարելահող	0.324
8	06-074-0223-0169	վարելահող	0.15
9	06-074-0261-0010	վարելահող	0.34
10	06-074-0264-0003	խոտհարք	1
11	06-074-0263-0171	խոտհարք	1
12	06-074-0282-0011	վարելահող	0.2
13	06-090-0107-0018	խոտհարք	8.603
14	06-039-0147-0035	վարելահող	0.294
15	06-039-0126-0205	վարելահող	0.128
16	06-039-0129-0022	վարելահող	0.226
17	06-039-0126-0334	վարելահող	0.06048
18	06-039-0166-0005	վարելահող	0.215
19	06-074-0218-0162	վարելահող	0.4
20	06-074-0265-0163	վարելահող	0.4544
21	06-074-0247-0043	վարելահող	0.3257
22	06-074-0272-0035	խոտհարք	1
23	06-074-0265-0103	խոտհարք	1
24	06-074-0219-0122	վարելահող	0.4
25	06-074-0229-0074	վարելահող	0.3
26	06-074-0265-0217	խոտհարք	0.01196
27	06-074-0264-0005	խոտհարք	0.92
28	06-100-0125-0139	խոտհարք	0.532
29	06-074-0378-0007	խոտհարք	0.0867
30	06-074-0363-0092	վարելահող	0.3843
31	06-100-0138-0005	խոտհարք	0.91
32	06-100-0102-0027	վարելահող	0.2161
33	06-074-0248-0053	վարելահող	0.5
34	06-074-0243-0002	վարելահող	0.3
35	06-074-0250-0016	խոտհարք	1.029
36	06-074-0248-0071	վարելահող	0.3872

37	06-074-0379-0152	վարելահող	0.4424
38	06-074-0229-0041	խոտհարք	1
39	06-074-0221-0178	վարելահող	0.2862
40	06-074-0219-0111	վարելահող	0.3922
41	06-082-0104-0101	վարելահող	0.4709
42	06-082-0104-0032	վարելահող	0.9014
43	06-082-0109-0019	վարելահող	0.286
44	06-074-0216-0167	վարելահող	0.2832
45	06-082-0131-0014	վարելահող	0.2079
46	06-082-0132-0039	խոտհարք	0.329
47	06-039-0169-0220	խոտհարք	0.057
48	06-039-0169-0554	խոտհարք	0.077
49	06-039-0142-0064	վարելահող	0.157
50	06-039-0114-0136	վարելահող	0.15
51	06-074-0265-0061	վարելահող	0.42179
52	06-074-0212-0058	վարելահող	0.1687
53	06-074-0214-0008	խոտհարք	0.976
54	06-074-0282-0097	վարելահող	0.5269
55	06-074-0254-0111	վարելահող	0.447
56	06-074-0223-0243	վարելահող	0.3
57	06-074-0279-0141	խոտհարք	0.56
58	06-074-0223-0082	վարելահող	0.3
59	06-074-0247-0060	վարելահող	0.2744
60	06-074-0236-0010	վարելահող	0.1696
61	06-074-0265-0030	վարելահող	0.391
62	06-074-0213-0061	խոտհարք	1.085
63	06-074-0294-0143	խոտհարք	0.4945
64	06-074-0279-0082	խոտհարք	0.6628
65	06-074-0219-0125	վարելահող	0.3
66	06-074-0254-0081	խոտհարք	0.6234
67	06-074-0258-0008	վարելահող	0.1261
68	06-039-0101-0027	վարելահող	0.148
69	06-074-0201-0642	խոտհարք	0.264
70	06-100-0125-0342	խոտհարք	0.677
71	06-100-0145-0037	վարելահող	0.265
72	06-074-0393-0200	խոտհարք	1.5
73	06-074-0220-0057	վարելահող	0.3
74	06-074-0393-0198	խոտհարք	0.5162
75	06-074-0281-0025	վարելահող	0.17342
76	06-100-0106-0021	վարելահող	0.405
77	06-039-0169-0523	խոտհարք	0.142
78	06-074-0801-0080	խոտհարք	0.13
79	06-039-0126-0169	վարելահող	0.115

80	06-039-0169-0196	խոտհարք	0.114
81	06-039-0171-0021	խոտհարք	0.107
82	06-039-0117-0042	վարելահող	0.083
83	06-074-0213-0038	վարելահող	0.3634
84	06-074-0254-0034	վարելահող	0.4145
85	06-074-0206-0008	խոտհարք	1

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ն. ՍՈԼՈՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 մարտի 2025 թվականի N 34-Ա

ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի 2-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի թիվ 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետով և 8-րդ կետերով և հիմք ընդունելով համայնքապետարան դիմած քաղաքացու դիմումը՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է.

1.Սահմանել փոխադրամիջոցների գույքահարկի արտոնություն՝

1) ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր Գետափնյա փողոց, թիվ 29 հասցեի բնակիչ Անդրանիկ Միքայելի Մխոյանին (ՀՎՀՀ՝ 900275081025, ՀԾՀ՝ 3008790022) ազատել Տաշիր համայնքում հաշվառված Մերսեդես Բենց Յ 180 ((Mercedes Benz C 180) մակնիշի, 19MA909 պետհամարնիշի ավտոմեքենայի 19350 (տանինը հազար երեք հարյուր հիսուն) դրամ գույքահարկից և Օպել Ջաֆիրա ՑՆԳ 1.6 (Opel Zafira CNG 1.6) մակնիշի, 19AM909 պետհամարնիշի ավտոմեքենայի 9700 (ինը հազար յոթ հարյուր) դրամ գույքահարկից :

2.Փոխադրամիջոցների գույքահարկի գծով արտոնության մասով փոխադրամիջոցների գույքահարկ վճարողի փոխարեն համայնքի բյուջեից կատարել վճարում:

Կողմ -13

Վ.ԱՆԱԽԱՍՅԱՆ

Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Դեմ -0

Ձեռնպահ -0

Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հ. ՄԱՐԴՈՅԱՆ

Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

Զ. ՊՈՂՈՍՅԱՆ

Ա. ՍՈԼՈՅԱՆ

Է. ՍՈՂՈՅԱՆ

Ա.ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Ի. ՏՈՄԵՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝

[Handwritten signature]

Ն ԲԱՂԱՍՏԱՐՅԱՆ



2025 մարտի 27
ք. Տաշիր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 մարտի 2025 թվականի N 35-Ա

«ԵՍ» ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ՄՈՒՆՔ» ՏԵԽՆՈԴՊՐՈՑԻ
ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒՆ ԵՎ
ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎԱՐՈՒՄԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով՝ 13-րդ հոդվածի 10-րդ մասի կարգավորումներով՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի մասնակցությանը « Ես » կրթական հիմնադրամի շրջանակներում «Մունք» տեխնոդպրոցի կողմից իրականացվող ծրագրին:
2. Համաձայնություն տալ ծրագրային հայտ-առաջարկի իրականացման համար Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի 2025 թվականի բյուջեից կատարել 500000 (հինգ հարյուր հազար) համապատասխան համաներդրմանը:

Կողմ -13

Վ.ԱՆԱԽԱՍՅԱՆ

Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Դեմ -0

Ձեռնպահ -0

Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հ. ՄԱՐԴՈՅԱՆ

Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

Զ. ՊՈՂՈՍՅԱՆ

Ա. ՍՈԼՈՅԱՆ

Է. ՍՈՂՈՅԱՆ

Ա.ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ի. ՏՈՄԵՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝

[Signature]



Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

2025 մարտի 27
ք. Տաշիր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 մարտի 2025 թվականի N 36-L

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀՈՂԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ
(ԱՄԵՆԱՄՅԱ) ԾԱՐԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և 43-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառավարման 2025 թվականի (ամենամյա) ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -13

Վ.ԱՆԱԽԱՍՅԱՆ

Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Դեմ -0

Ձեռնպահ -0

Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հ. ՄԱՐԴՈՅԱՆ

Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

Զ. ՊՈՂՈՍՅԱՆ

Ա. ՍՈԼՈՅԱՆ

Է. ՍՈՂՈՅԱՆ

Ա.ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ի. ՏՈՄԵՅԱՆ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝

Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

2025 մարտի 27

ք. Տաշիր

ԾՐԱԳԻՐ

ՀԱՅԱՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ (ԱՄԵՆԱՄՅԱ)

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի (այսուհետ՝ Համայնք) սեփականություն հանդիսացող հողերի կառավարման 2025 թվականի (ամենամյա) ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) նպատակաուղղված է համայնքի սեփականություն հանդիսացող հողերի (այսուհետ՝ Հողեր) օգտագործման արդյունավետության բարձրացման և համայնքի հողային պաշարների կառավարման՝ տիրապետման, օգտագործման և տնօրինման բնագավառում համայնքային միասնական քաղաքականության սահմանման, համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման և համայնքի հնգամյա զարգացման ծրագրով (այսուհետ՝ ՀՀԶԾ) սահմանված խնդիրների լուծմանը և հանդիսանում է ՀՀԶԾ-ի բաղկացուցիչ մասը:

2. Ծրագրի իրականացման հիմքում դրվել են 2025 թվականի ընթացքում Հողերի նպատակային և ծրագրային կառավարման հետ կապված հարաբերությունները, ներառյալ՝ գույքագրման, հաշվառման, գնահատման, համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցման աշխատանքների կազմակերպման, Հողերի պահպանվածության ապահովման ու կառավարման նկատմամբ վերահսկողության իրականացման հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման և բյուջետային քաղաքականության ուղղություններով սահմանված խնդիրները:

3. Ծրագրի իրականացման իրավական հիմքերն են՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, Հայաստանի Հանրապետության հողային, քաղաքացիական և վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքերը, «Տեղական ինքնակառավարման մասին», «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին», «Հրապարակային սակարկությունների մասին», «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքները, հողային հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումները, ինչպես նաև համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից ընդունված Հողերի կառավարման ոլորտի վերաբերյալ իրավական ակտերը:

4. Հողերը տնօրինում է համայնքի ավագանին՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով, Հայաստանի Հանրապետության հողային, քաղաքացիական և վարչական իրավախախտումների վերաբերյալ

օրենսգրքերով, այլ օրենքներով ու նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով:

5. Հողերի կառավարման հարաբերությունների կարգավորումը ներառում է՝

1) Հողերի կառավարման հիմնախնդիրների լուծումը.

2) Հողերի հաշվառման բնագավառում միասնական սկզբունքների սահմանումը և անշարժ գույքի հաշվառման բազայում Հողերի ամբողջական ընդգրկումը, ինչպես նաև հաշվառման տվյալների ճշգրտության բարձր մակարդակ ապահովելու նպատակով ընտրանքային ուսումնասիրությունների անցկացումը.

3) Հողերի մշտադիտարկումը (մոնիթորինգ), օգտագործումը և պահպանումը, Հողերի շրջանառության նպատակի իրականացումը.

4) Հողերի կառավարման բնագավառում համայնքային քաղաքականության մշակումն ու իրականացումը, ուղղությունների սահմանումը.

5) Հողերի օտարման և օգտագործման ոլորտում համայնքային քաղաքականության մշակումը և իրականացումը.

6) Հողերի գույքային իրավունքների կառավարման ոլորտում միասնական քաղաքականության մշակումը և իրականացումը:

6. Ծրագրի նպատակներն են՝

1) Հողերի կառավարման արդյունավետության շարունակական բարձրացումը.

2) Հողերի կառավարման միասնական համակարգի ձևավորումը, հանրային օգտակարության բարձրացումը.

3) Հողերի օտարումից, ինչպես նաև վարձակալության, կառուցապատման և սահմանափակ օգտագործման (սերվիտուտ) իրավունքով տրամադրելուց ստացված միջոցների հաշվին համայնքի բյուջեում եկամուտների ապահովումն ու ավելացումը.

4) համայնքային գույքային շրջանառության բնագավառում միասնական քաղաքականության իրականացումը.

5) Հողերի ամբողջական հաշվառումը, հաշվառման տվյալների թափանցիկության և հրապարակայնության ապահովումը.

6) համայնքային հողային հարաբերությունների կարգավորումը և շարունակական բարեփոխումը.

7) հանրությանը Հողերի կառավարման գործընթացին մասնակից դարձնելը.

8) Հողերի արդյունավետ օգտագործման ճանապարհով համայնքային տնտեսությունում ներդրումների ներգրավման բարենպաստ պայմանների ապահովումը:

7. Սույն Ծրագրի իրականացման հիմքում դրված են Հողերի կառավարման հետևյալ սկզբունքները՝

1) Հողերի կառավարման յուրաքանչյուր հողակտորի ծրագրային կառավարման նպատակի սահմանում և ամրագրում.

2) Հողերի կառավարման արդյունավետության շարունակական ապահովում.

3) Հողերի կառավարման ոլորտում մասնակիցների շահերի ներդաշնակության ապահովում.

4) համայնք-մասնավոր համագործակցության պարզեցված պայմանների ներդրում.

5) Հողերի կառավարման թափանցիկության և հրապարակայնության ապահովում:

8. Հողերի կառավարման ընդհանուր գերակայություններն են՝

1) Հողերի օգտագործման արդյունավետության բարձրացման ապահովումը.

2) Հողերի բերրիության, ֆիզիկական, որակական և նորմատիվային այլ հատկանիշների պահպանումը.

3) Համայնքի կարիքների բավարարման համար անհրաժեշտ Հողերի գերակայությունը, ընդ որում, եթե միևնույն հողամասը կարող է ունենալ նաև շահույթ ստանալու հնարավորություն, այնուամենայնիվ, այն դասվում է համայնքի կարիքները բավարարող հողամասերի խմբին.

4) համայնքի կարիքները բավարարող հողամասերը հիմնականում ենթակա չեն օտարման.

5) շահույթ ստանալու նպատակ հետապնդող հողամասերի կառավարման համար օգտագործման այլընտրանքային տարբերակներից նախապատվությունը տրվում է այն տարբերակներին, որոնք առավել նպաստում են համայնքի տնտեսական աճի ապահովմանը, մասնավոր հատվածում օտարերկրյա և ներքին ներդրումների ներգրավմանը, շուկայական մրցակցության խթանմանը, արտահանման խթանմանը, աշխատատեղերի ստեղծմանը և աղքատության հաղթահարմանը, համայնքի բյուջեի եկամուտների ավելացմանը:

9. Հողերի գույքագրան, հաշվառման, գնահատման, համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցման աշխատանքների կազմակերպման, աճուրդների և մրցույթների հայտարարման, կազմակերպման և իրականացման ընթացակարգերը իրականացվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով (համայնքի ավագանու կողմից սահմանված կարգ լինելու դեպքում՝ այդ կարգով):

10. Հողերի օտարման (սեփականության իրավունքով անհատույց տրամադրումը, աճուրդով վաճառքը, ուղղակի վաճառքը և փոխանակությունը) և օգտագործման (վարձակալության, կառուցապատման և սահմանափակ օգտագործման (սերվիտուտ) իրավունքի, անհատույց (մշտական) օգտագործման իրավունքի) տրամադրումը կազմակերպվում և իրականացվում է Հայաստանի Հանրապետության հողային, քաղաքացիական օրենսգրքերին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմանը և հողային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերին համապատասխան:

11. Ծրագրի ցանկերում ներառված Հողերի օտարումը, օգտագործման և կառուցապատման իրավունքի տրամադրումն իրականացվում է բացառապես հողերի օգտագործման սխեմաներով, անտառաշինարարական նախագծերով, բնակավայրերի գլխավոր հատակագծերով, մանրամասն հատակագծման նախագծերով, գոտևորման նախագծերով:

**II. ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ՝ ԸՍՏ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՈՒ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ,
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՒՔՅԵԿՏՆԵՐԻ**

12. Ստորև Աղյուսակ 1-ում ներկայացված է համայնքի հողային հաշվեկշիռը՝ ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի ու գործառնական նշանակության, սեփականության սուբյեկտների:

Աղյուսակ 1

**ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի
ԴՐՈՒԹՅԱՄԲ ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

		Տարածքը (հեկտար)
	Համայնքի տարածքը	68882,09
	այդ թվում՝	
1.	Հողային ֆոնդն ըստ նպատակային նշանակության	
1)	գյուղատնտեսական նշանակության հողեր	60514,76
	որից՝	
ա.	վարելահողեր	11963,98
բ.	բազմամյա տնկարկներ	16,10
գ.	խոտհարքներ	13029,57
դ.	արոտավայրեր	28526,62
ե.	այլ հողատեսքեր	6978,49
2)	բնակավայրերի հողեր	2247,77
	որից՝	
ա.	տնամերձ և այգեգործական (ամառանոցային) հողեր	266,13
3)	արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր	457,71
4)	Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր	334,29
5)	հատուկ պահպանվող տարածքների հողեր	141,14
6)	հատուկ նշանակության հողեր	234,40
7)	անտառային հողեր	4211,17
8)	ջրային հողեր	740,06
9)	պահուստային հողեր	0
2.	Հողային ֆոնդն ըստ սեփականության սուբյեկտների	
1)	Քաղաքացիների	9664,80
2)	Իրավաբանական անձանց	77,26
3)	Համայնքային	31245,38
4)	Պետական	28023,29
5)	Օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների	4,81

**III. ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՈՌՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԸ ԸՍՏ՝ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ, ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ (ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ,
ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ, ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ (ՍԵՐՎԻՏՈՒՏ)
ԱՆՀԱՏՈՒՅՑ (ՄՇՏԱԿԱՆ) ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՆԵՐԻ)
ՏՐԱՄԱԴՐՎԱԾՈՒԹՅԱՆ**

13. Ստորև Աղյուսակ 2-ում ներկայացված է 01.07.2024 թվականի դրությամբ համայնքի հողային հաշվեկշռով համայնքի սեփականություն հանդիսացող հողերը ըստ՝ հողատեսքերի, նպատակային և գործառնական նշանակության, վարձակալության և անհատույց օգտագործման տրամադրվածության:

Աղյուսակ 2

	Նպատակային նշանակություն ը	Գործառնական նշանակությունը /հողատեսքը	Ընդամենը համայնքի սեփականություն հանդիսացող հողերը ըստ հողային հաշվեկշռի (հա)	Տրամադրված է վարձակալութ յան (հա)	Տրամադրվ ած է անհատույց օգտագործմ ան (հա)
1	2	3	4	5	6
1.1	Գյուղատնտ եսական	վարելահող	7011,73	3430,55	0
1.2		բազմամյա տնկարկներ	16,10	11,00	0
1.3		խոտհարք	8684,17	2682,34	0
1.4		արոտ	12600,29	5344,22	40,00
1.5		այլ հողատեսքեր	1741,57	57,24	0
2.1	Բնակավայր երի	բնակելի	106,79	36,82	0
2.2		հասարակական	31,27	5,90	0
2.3		խառը կառուցապատմա ն	4,86	0	0
2.4		ընդհանուր օգտագործման	266,13	0,02	0
2.5		այլ հողեր	258,79	0	0

	Արդյունաբերական, ընդերք օգտագործման և այլ արտադրական նշանակության				
3.1	արդյունաբերական	արդյունաբերական	12,56	0,40	0
3.2		Գյուղատնտեսական արտադրական	233,45	10,66	0
3.3		պահեստարանների	6,90	0	0
3.4		ընդերք օգտագործման	8,29	8,29	0
4.1	Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների	Էներգետիկայի	10,45	2,30	0
4.2		կապի	1,01	0,02	0
4.3		տրանսպորտի	4,14	0	0
4.4		կոմունալ	10,05	0	0
5.1	Հատուկ պահպանվող տարածքների	բնապահպանական	0	0	0
5.2		առողջարարական	3,73	0	0
5.3		հանգստի	4,30	0	0
5.4		պատմական և մշակութային	61,66	0	0
6	Հատուկ նշանակության		0	0	0
7.1	Անտառային	անտառ	8,00	0	0
7.2		թփուտ	0	0	0
7.3		վարելահող	0	0	0
7.4		խոտհարք	0	0	0
7.5		արոտ	0	0	0
7.6		այլ հողեր	0	0	0
8.1	Ջրային	գետեր	0	0	0
8.2		ջրամբարներ	0	0	0
8.3		լճեր	136,37	67,73	0
8.4		ջրանցքներ	14,75	0	0
8.5		հիդրոտեխնիկական և	8,59	0	0

		ջրատնտեսական այլ օբյեկտների			
9.1	Պահուստային	աղբուկներ	0	0	0
9.2		ավազուկներ	0	0	0
9.3		ճահիճներ	0	0	0
9.4		այլ	0	0	0
ԸՆԴԱՄԵՆԸ			31245,95	11657,49	40,00

IV. ԾՐԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

14. Սույն ծրագրի գործողությունը տարածվում է՝

1) համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի վրա.

2) համայնքային հիմնարկներին, համայնքի մասնակցությամբ առևտրային և համայնքային ենթակայությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններին, պետական ոչ առևտրային կազմակերպություններին, հիմնադրամներին անհատույց օգտագործման իրավունքով և վարձակալությամբ տրամադրված Հողերի վրա.

3) քաղաքացիներին, իրավաբանական անձանց, օտարերկրյա պետություններին օգտագործման, կառուցապատման և սահմանափակ օգտագործման (սերվիտուտ) իրավունքով տրամադրված և հավատարմագրային կառավարման հանձնված Հողերի վրա.

15. Սույն ծրագրի գործողությունը չի տարածվում՝ համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասերի վրա, այդ հողամասերի հողային հարաբերությունների կարգավորումները համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը իրականացնում են Հայաստանի Հանրապետության հողային օրենսդրությամբ և նորմատիվ իրավական ակտերով սահմանված իրավակարգավորումներին համապատասխան:

16. Ծրագրով սահմանված նպատակների իրագործման համար պետք է լուծվեն հետևյալ խնդիրները՝

1) Հողերի օտարման և օգտագործման տրամադրման յուրաքանչյուր հողամասի ծրագրային կառավարման իրականացումը.

2) Հողերի օտարման, երկարաժամկետ և կարճաժամկետ վարձակալության գործընթացում արդիական գործիքակազմի կիրառումը, անհատույց

օգտագործման տրամադրման ընթացակարգերի պարզեցումը, հավասար պայմանների սահմանումը, վարչարարության կրճատումը, գործընթացի թափանցիկության և հրապարակայնության ապահովումը.

3) չօգտագործվող կամ ոչ արդյունավետ օգտագործվող Հողերը տնտեսական շրջանառության մեջ դնելու աշխատանքների իրականացումը.

4) Հողերի հաշվառման բնագավառում արդիական միջոցների ներդրումը և հանրությանը հաշվառման տվյալները հասանելի դարձնելը.

5) Հողերի օգտագործման վիճակի վերաբերյալ ֆինանսատնտեսական մոնիթորինգի իրականացումը և Հողերի օգտագործման նկատմամբ գործուն վերահսկողական համակարգի ներդրումը.

6) Հողերի կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով՝ համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների գործունեության արդյունքներից ելնելով նրանց պատասխանատվության և կատարված աշխատանքի խրախուսման բնագավառում նոր գործիքակազմի ներդրումը.

7) ներդրումային ծրագրեր իրականացնող, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու նպատակ հետապնդող և նոր աշխատատեղեր ստեղծող ձեռնարկություններին և կազմակերպություններին Հողերի օտարման և օգտագործման տրամադրման նպաստավոր պայմանների ապահովումը:

V. ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՈՒՄԸ

17. Հողերը օտարվում են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով սահմանված դեպքերում ու կարգով՝

ա) սեփականության իրավունքն անհատույց փոխանցելու միջոցով.

բ) ուղղակի վաճառքի միջոցով.

գ) աճուրդով.

դ) փոխանակության միջոցով:

18. Հողամասերը (բացառությամբ՝ արոտավայրերի) կարող են օտարվել (այդ թվում՝ անհատույց) միայն համայնքի ղեկավարի առաջարկությամբ և համայնքի ավագանու որոշմամբ:

19. Համայնքի սեփականությունը հանդիսացող արոտավայրերը հանդիսանալով ընդհանուր օգտագործման արոտավայրեր և ներառված լինելով ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների մեջ, օտարման ենթակա չեն, դրանք միայն կարող են տրվել օգտագործման իրավունքով:

20. Հողամասի օտարման մասին որոշումը ներառում է տեղեկություններ՝

1) հողամասի գտնվելու վայրի, ծածկագրի, մակերեսի, նպատակային նշանակության, հողատեսքի, գործառնական նշանակության, օտարման եղանակի, ժամկետների, նպատակ, ուղղակի վաճառքի դեպքում՝ վաճառքի գնի, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գնի մասին.

2) հողամասն ուղղակի վաճառքի ներկայացնելու ժամանակ՝ գնորդի անունը կամ անվանումը, օտարվող հողամասի վաճառքի գնի և վճարման ժամկետների մասին:

21. Հողամասի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը չի կարող պակաս լինել հողամասի կադաստրային արժեքի 100 տոկոսից:

22. Հողամասերը օտարվում են համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերով ու համայնքի հողերի օգտագործման սխեմայով սահմանված նպատակներին, հողերի կառավարման հնգամյա ծրագրին համապատասխան և համայնքի տարածքում տնտեսական գործունեության խթանման համար, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով նախատեսված դեպքերում: Հողերի օտարումը պետք է լինի հիմնավորված, ապահովի որոշակի խնդրի արդյունավետ լուծում:

23. Հողերի օտարման պայմանագրերում պետք է ամրագրվեն համայնքի կողմից հողի առաջնային հետգնման իրավունքը և տնտեսավարող սուբյեկտների կողմից իրականացվող ծրագրերի ժամկետները:

VI. ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

24. Հողամասերն օգտագործման են տրամադրվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով սահմանված դեպքերում ու կարգով՝

ա) անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով.

բ) վարձակալության:

25. Հողամասերի կառուցապատման իրավունքի տրամադրումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերից:

26. Հողերը կարող են օգտագործվել՝ վարձակալության, կառուցապատման և սահմանափակ օգտագործման (սերվիտուտ) իրավունքով (այդ թվում՝ անհատույց) հանձնվել միայն համայնքի ղեկավարի առաջարկությամբ և համայնքի ավագանու որոշմամբ:

27. Հողամասի օգտագործման (վարձակալության, կառուցապատման և սահմանափակ օգտագործման (սերվիտուտ) իրավունքը) տրամադրելու մասին ավագանու որոշումը ներառում է տեղեկություններ՝ հողամասի գտնվելու վայրի, ծածկագրի, մակերեսի, նպատակային նշանակության, հողատեսքի, գործառնական նշանակության, օգտագործման տրամադրման եղանակի, օգտագործման ժամկետի, նպատակի, վճարի չափի, հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գնի մասին:

28. Հողամասերը մրցույթներով վարձակալության տրամադրելու համար վարձավճարի մեկնարկային տարեկան վարձավճարի չափը չի կարող պակաս լինել անշարժ գույքի հարկի տարեկան դրույքաչափից:

29. Հողամասի վարձակալության մրցույթը չկայանալու դեպքում կրկնամրցույթը կարող է հայտարարվել Հայաստանի Հանրապետության հողային

օրենսգրքի 78-րդ հոդվածով սահմանված կարգով ու ժամկետներում, բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողամասերի, որոնց կրկնամրցույթն անց է կացվում 7 աշխատանքային օրվա ընթացքում: Կրկնակի մրցույթի չկայանալու դեպքում հողամասը կարող է տրամադրվել առանց մրցույթի:

30. Համայնքի սեփականությունը հանդիսացող արոտավայրերը և խոտհարքները համայնքի ղեկավարի կողմից կարող են պարզեցված կարգով վարձակալության հանձնվել և առանց նոտարական վավերացման համապատասխան պայմանագրերը կնքվել մինչև 3 տարի ժամկետով՝ ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի «Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին» N 1477-Ն որոշմամբ սահմանված կարգով:

VII. ՀՈՂԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

31. Հողերի կառավարման համակարգի կատարելագործման և Հողերի օգտագործման արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

1) օտարել՝

սույն հավելվածի N 1 ցանկով առաջարկվող՝

այն հողամասերը, որոնց աճուրդով և ուղղակի վաճառքի միջոցով օտարումը առավել կնպաստեն համայնքի տնտեսական աճի ապահովմանը, մասնավոր հատվածում օտարերկրյա և ներքին ներդրումների ներգրավմանը, շուկայական մրցակցության խթանմանը, արտահանման խթանմանը, աշխատատեղերի ստեղծմանը և աղքատության հաղթահարմանը, համայնքի բյուջեի եկամուտների ավելացմանը.

2) օգտագործման տրամադրել՝

սույն հավելվածի N 2 ցանկում նշված հողամասերը

3) 2025 թվականի ընթացքում ապահովել ընդհանուր բնույթի հետևյալ միջոցառումների կատարումը՝

ա. վերանայել մինչև սույն Ծրագրի կազմումը նախկինում վարձակալության պայմանագրերով տրամադրված հողամասերի տրամադրման ժամկետները, վարձավճարների չափերը և դրանք համապատասխանեցնել գործող օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

բ. համապատասխան իրավական ակտերի միջոցով հողամասերի գործառնական և նպատակային նշանակությունները համապատասխանեցնել գործող օրենսդրության պահանջներին:

գ. իրականացնել մինչև սույն Ծրագրի կազմումը նախկինում վարձակալության պայմանագրերով տրամադրված հողամասերի հողօգտագործողների կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման մոնիթորինգ, հողօգտագործողների կողմից պայմանագրային պարտավորությունների չկատարման պատճառների և գործոնների վերլուծություն:

դ. վերահսկողություն իրականացնել Հողերի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ և վերահսկողության արդյունքում հայտնաբերված իրավախախտումների մասով կիրառել պատասխանատվության միջոցներ Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

ե. սահմանել Հողերի կառավարման գործընթացում ընդգրկված անձանց աշխատանքի պատասխանատվություն սահմանող և խրախուսման ենթարկող այնպիսի ձևեր ու մեխանիզմներ, որոնք կախված կլինեն նրանց գործունեության վերջնական արդյունքներից:

զ. Հողերի կառավարման գործընթացում ընդգրկված անձանց որակավորման բարձրացման նպատակով ապահովել նրանց մասնակցությունը մասնագիտական վերապատրաստումներին:

VIII. ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄՆ ՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

32. Ծրագրով նախատեսված միջոցառումների կատարումը ապահովում է համայնքի ղեկավարը՝ համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի աշխատակիցների, ինչպես նաև աշխատակազմի իրավաբանական գործառույթներ իրականացնող աշխատակցի միջոցով:

33. Ծրագրով սահմանված նպատակների իրագործման, միջոցառումների իրականացման և Ծրագրի կատարման մասին համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի աշխատակիցների, ինչպես նաև աշխատակազմի իրավաբանական գործառույթներ իրականացնող աշխատակցի կողմից մինչև հաջորդ տարվա փետրվարի 15-ը մշակվում է տարեկան հաշվետվություն, որը ներկայացվում է համայնքի ղեկավարին: Համայնքի ղեկավարը հաշվետվությունը քննարկում է համայնքի ավագանու մշտական հանձնաժողովի, աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի, համայնքի ղեկավարին կից համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման հարցերի խորհրդակցական մարմինների հետ: Համայնքի ղեկավարը հաշվետվությունը և հաշվետվության վերաբերյալ ստացված բոլոր առաջարկությունները՝ մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հետ ներկայացնում է համայնքի ավագանու քննարկմանը:

IX. ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ

34. Ծրագրում փոփոխություններ կամ լրացումներ կարող են առաջարկվել համայնքի ղեկավարի կամ համայնքի ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի առնվազն մեկ երրորդի կամ ավագանու մշտական հանձնաժողովների կողմից: Համայնքի ավագանու մշտական հանձնաժողովների

կամ անդամների կողմից առաջարկված այն փոփոխությունների կամ լրացումների վերաբերյալ, որոնք ավելացնում են ծրագրի իրականացման ծախսերը, համայնքի ղեկավարը կազմում և ավագանուն է ներկայացնում իր եզրակացությունը:

Համայնքի ղեկավարը ծրագրում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու վերաբերյալ ստացված բոլոր առաջարկությունները օրենքով սահմանված կարգով ներկայացնում է համայնքի ավագանու քննարկմանը:

Ճ. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

35. Ծրագրով նախատեսված միջոցառումների և համայնքային նշանակության հողաշինարարությունը (հողամասերի չափագրումը, համայնքի սեփականության իրավունքների պետական գրանցումը և վկայականների ձեռքբերումը, աճուրդների և մրցույթների կազմակերպումը, գյուղատնտեսական հողերի պահպանման ծրագրերի մշակումը, հողամասերը տեղանքում ամրացնելը, հողամասերի հատակագծերի, հողամասի տրամադրման վերաբերյալ փաստաթղթերի նախապատրաստումը, համայնքային հողաշինարարական և հողի օգտագործման ու պահպանության այլ նախագծերի մշակումը, խախտված հողերի վերականգնումը, հողաշերտերը ջրային ու հողմային հողատարումից, անապատացումից, ցեխաջրերից, փլուզումներից, ջրածածկումից, ճահճացումից, չորացումից, պնդացումից, աղակալումից, արտադրական և կենցաղային թափոնների, ռադիոակտիվ և քիմիական նյութերի ախտահարումից պաշտպանելու, գյուղատնտեսական հողերը բարելավելու, նոր հողեր յուրացնելու, հողը պահպանելու և դրա բերրիությունը բարձրացնելու ծրագրերի, աշխատանքային նախագծերի մշակումը, հատուկ պահպանվող տարածքների տեղաբաշխման և դրանց սահմանագծման հիմնավորումը, համայնքում սեփականատերերի և հողօգտագործողների հողամասերի սահմանների նկարագրումը, ամրացումը և փոփոխությունը, հողաշինության գծով տեղագրական, գեոդեզիական, քարտեզագրական, հողային, ագրոքիմիական, երկրաբուսաբանական, պատմական և մշակութային ու այլ հետազոտական աշխատանքների իրականացումը, համայնքի հողային ֆոնդի հաշվառումը, գույքագրումը և չօգտագործվող, ինչպես նաև ոչ արդյունավետ օգտագործվող կամ իր նպատակային նշանակությանն անհամապատասխան օգտագործվող հողերի բացահայտումը, հողային պաշարների վիճակի և օգտագործման կադաստրային ու թեմատիկ քարտեզների և ատլասների կազմումը, հողերի մոնիթորինգը, նոր հողամասերի կազմավորման, հողամասերի միավորման ու բաժանման, գոյություն ունեցող հողամասերի կարգավորման միջոցառումների իրականացումը) իրականացվում է համայնքային բյուջեի միջոցների հաշվին:

36. Ծրագրով նախատեսված Հողերի օտարումից, ինչպես նաև՝ վարձակալության, կառուցապատման և սահմանափակ օգտագործման (սերվիտուտ) իրավունքով տրամադրումից, աճուրդների և մրցույթների կազմակերպումից ստացված միջոցները մուտքագրվում են համայնքի բյուջե:

ՑԱՆԿ N 1

2025 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՕՏԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՀՈՂԵՐԻ

ՀՀ	Նպատակային նշանակությունը	Գործառնական նշանակությունը/հողատեսքը	Մակերեսը /հա/
1	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատման	30
2	Բնակավայրերի	Հասարակական կառուցապատման	6
3	Բնակավայրերի	Խառը	2
4	Բնակավայրերի	Այլ	30
5	Գյուղատնտեսական	Վարելահող	10
6	Գյուղատնտեսական	Խոտհարք	25
7	Գյուղատնտեսական	Այլ հողատեսք	10

ՑԱՆԿ N 2

2025 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՀՈՂԵՐԻ

ՀՀ	Նպատակային նշանակությունը	Գործառնական նշանակությունը/հողատեսքը	Մակերեսը /հա/
1	Գյուղատնտեսական	Վարելահող	150
2	Գյուղատնտեսական	Խոտհարք	720
3	Գյուղատնտեսական	Արոտ	1300
4	Գյուղատնտեսական	Այլ հողատեսք	230
5	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատման	5



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 մարտի 2025 թվականի N 37-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N131-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի 2024 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N131-Ա որոշման հավելվածի 8-րդ տողի «Հաստիքային միավոր» սյունակի «2» թիվը փոխարինել «3» թվով:

Կողմ -13

Վ.ԱՆԱԽԱՍՅԱՆ

Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Դեմ -0

Ձեռնպահ -0

Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հ. ՄԱՐԴՈՅԱՆ

Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

Ջ. ՊՈՂՈՍՅԱՆ

Ա. ՍՈԼՈՅԱՆ

Է. ՍՈՂՈՅԱՆ

Ա.ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Վ. ՍԵՓԱՆՅԱՆ

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ի. ՏՈՄԵՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝

 Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ



2025 մարտի 27

ք. Տաշիր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 մարտի 2025 թվականի N 38-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու
հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2025 թվականի ապրիլի 25-ը,
ժամը՝ 14:30-ին:

Կողմ -13

Վ.ԱՆԱԽԱՍՅԱՆ

Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Դեմ -0

Ձեռնպահ -0

Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հ. ՄԱՐԴՈՅԱՆ

Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

Զ. ՊՈՂՈՍՅԱՆ

Ա. ՍՈԼՈՅԱՆ

Է. ՍՈՂՈՅԱՆ

Ա.ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ի. ՏՈՄԵՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝

Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ



2025 մարտի 27

ք. Տաշիր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 մարտի 2025 թվականի N 39-Ա

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ «ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ
ԶԱՐԳԱՅՈՒՄ, ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՅՈՒՄ ԵՎ ԼԱՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ – ՓՈՒԼ 2» ԾՐԱԳՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ « ԿԱՄՐՋՎՈՂ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐ ԱՎԵԼԻ ՄԱՔՈՒՐ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ » ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ
ԾՐԱԳՐԻ ՀԱՐՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎԱՐՈՒՄԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒՆ
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին
մասի 1-ին և 2-րդ կետերով՝ 13-րդ հոդվածի 10-րդ մասի կարգավորումներով՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Եվրոպայի խորհրդի կողմից ֆինանսավորվող «Ժողովրդավարական
զարգացում, ապակենտրոնացում և լավ կառավարում Հայաստանում – փուլ 2»
ծրագրով իրականացվող «Կամրջվող համայնքներ ավելի մաքուր քաղաքների համար»
դրամաշնորհային ծրագրի հայտը՝ համաձայն հավելվածի:
2. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր
համայնքի 2025 թվականի բյուջեից ծրագրի իրականացման համար հատկացնել 10%
համաֆինանսավորմանը:

Կողմ -13

Վ.ԱՆԱԽԱՍՅԱՆ

Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Դեմ -0

Ձեռնպահ -0

Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հ. ՄԱՐԴՈՅԱՆ

Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

Զ. ՊՈՂՈՍՅԱՆ

Ա. ՍՈԼՈՅԱՆ

Է. ՍՈՂՈՅԱՆ

Ա.ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ի. ՏՈՄԵՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝

[Handwritten signature]



Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

2025 մարտի 27

Բ. Տաշիր

COUNCIL OF EUROPE



CONSEIL DE L'EUROPE

**ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ
ԸՆԹԱՑԱԿԱՐԳ**

ԴԻՍՈՒՄ-ՀԱՅՏԻ ՁԵՎ (ՀԱՎԵԼՎԱԾ I)

«Ժողովրդավարական զարգացում, ապակենտրոնացում և լավ կառավարում
Հայաստանում – Փուլ 2» ծրագրի շրջանակում

8900-2024-02 – Միջհամայնքային համագործակցության
ծրագրերի դրամաշնորհներ

Վերջնաժամկետը՝ 15-ը նոյեմբերի, 2024թ.

Ներածություն

Շնորհակալություն այս կարևոր ծրագրի նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերելու համար:

Ավստրիական զարգացման համագործակցության կողմից ֆինանսավորվող և Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվող «Ժողովրդավարական զարգացում, ապակենտրոնացում և լավ կառավարում Հայաստանում – Փուլ 2» ծրագիրը նպատակ ունի աջակցելու եվրոպական չափանիշներին համապատասխան տեղական ինքնակառավարման վերանայված օրենսդրության ընդունմանը, որը կարտացոլի Հայաստանի նոր տարածքային-վարչական քարտեզը, ինչպես նաև զարգացնելու նոր խոշորացված համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունները՝ ապահովելով նրանց կողմից նոր պարտականությունների և իրավասությունների ստանձնումը: Այն նաև միտված է լավ կառավարման սկզբունքների մասին իրազեկության բարձրացմանը, ինչպես նաև միջհամայնքային համագործակցության (ՄՀՀ) անդրսահմանային համագործակցության (ԱՄՀՀ) և տեղական մակարդակում տնտեսական զարգացման խթանմանը:

Այս դրամաշնորհային մրցույթի ընդհանուր նպատակն է աջակցել **միջհամայնքային համագործակցության նախաձեռնություններին**, որոնք ուղղված են **ծառայությունների մատուցման բարելավմանը**, ֆինանսական կայուն կառավարման ապահովմանը և փողի դիմաց արժեքի ապահովմանը:

Այս դրամաշնորհային մրցույթը բաց է **Հայաստանի բոլոր 64 խոշորացված համայնքների** համար: Ընտրված համայնքները դրամաշնորհներ կստանան միջհամայնքային համագործակցության տեղական ծրագրերի իրականացման համար: Միջհամայնքային համագործակցությունը կներառի համագործակցություն հարևան համայնքների միջև Հայաստանի ամբողջ տարածքում:

Դրամաշնորհ կստանան այն ծրագրերի առաջարկները, որոնք արդյունավետ և հստակ ձևով կհամապատասխանեն դրամաշնորհի չափանիշներին:

Ակնկալվում է, որ համայնքը ներդրում կկատարի դրամաշնորհի ընդհանուր գումարի առնվազն 10%-ի չափով:

Այս ծրագրի հիմքում է Լավագույն գործելակերպի ծրագրի (այսուհետ՝ ԼԳԾ) մեթոդաբանությունը, որը նպաստում է լավ փորձի հավաքագրմանը և համայնքներում դրա տարածմանը: Այն ենթադրում է համակարգված մոտեցում, որտեղ ընտրված ոլորտների լավագույն փորձը բացահայտվում, նշանավորվում և տարածվում է այլ համայնքներում:

ԼԳԾ-ի նպատակն է բացահայտել, հանրահռչակել և տարածել լավագույն գործելակերպը Հայաստանի խոշորացված համայնքներում՝ հատկապես.

- զարգացնել տեղական իշխանությունների և տեղական շահագրգիռ կողմերի կարողությունները՝ մշակելու և իրականացնելու ծրագրերի առաջարկներ, որոնք խթանում են ներառական մասնակցությունը և բարելավված ծառայությունների մատուցում քաղաքացիներին.
- բարձրացնել տեղական ինքնակառավարման չափանիշները՝ բացահայտելով և ճանաչելով քաղաքացիական մասնակցության, կառավարման բացության և թափանցիկության և տեղական իշխանությունների և նրանց շահագրգիռ կողմերի հետ համագործակցության նորարարական և գերազանց փորձը.
- ճանաչել և պարզնադրել տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքի հիմնական ոլորտներում լավագույն կատարողներին և օգնել տարածել այս պրակտիկաները, որոնցից այլ համայնքներ կարող են սովորել:

Հայտատու համայնքները, ընտրվելու դեպքում, հաստատում են այլ համայնքների հետ իրենց լավագույն գործելակերպով կիսվելու պատրաստակամությունը: Այսպիսով, ԼԳԾ-ի շրջանակում ենթադրամաշնորհներ ստացող տեղական իշխանությունների վրա է դրվում իրենց լավագույն գործելակերպն այլ տեղական իշխանությունների համար վերապատրաստման գործիքի վերածելու պարտավորությունը՝ ամրապնդելով ծրագրերի կայունությունը և տեղական հանձնառությունը:

Դրամաշնորհների դիմում-հայտերի մանրագնին գնահատումը կիրականացնի Դրամաշնորհների գնահատման հանձնաժողովը (կազմված Եվրոպայի խորհրդի, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և ՏԻՄ ներկայացնող միավորումներներից մեկի ներկայացուցիչներից)՝ ապահովելու, որ հավանությանն արժանանան լավագույն նախաձեռնությունները:

Դիմում-հայտերը կգնահատվեն հետևյալ չափանիշներով.

- որքանով է առաջարկվող ծրագիրը համապատասխանում *Դիմում-հայտերի ներկայացման հրավերի* նպատակին և պահանջներին (60%).
- դիմում-հայտի և բյուջեի առաջարկի ճշգրտությունը, հստակությունը և ծախսարդյունավետությունը (30%).
- դրամաշնորհային ծրագրերի իրականացման նախկին փորձը (10%):

Մենք իսկապես հուսով ենք, որ դուք կմասնակցեք այս ծրագրին, և անհամբեր սպասում ենք Ձեզ հետ համագործակցությանը:

ԻՆՉՊԵՍ ԼՐԱՑՆԵԼ ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԻ ՁԵՎԸ

Յուրաքանչյուր դաշտում լրացրե՛ք պահանջվող տեղեկատվությունը: Դաշտի չափը հարմարեցվում է մուտքագրված տեքստի ծավալին:

Բոլոր դաշտերը լրացնելուց հետո տպե՛ք Դիմում-հայտը, ստորագրե՛ք այն և ուղարկե՛ք այն *Դիմում-հայտերի ներկայացման հրավերի* պահանջներին համապատասխան:

1. Հայտատու համայնք	
Պաշտոնական անվանումը ►	ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան
Իրավական տեսակը ►	Համայնքային կառավարչական հիմնարկ
Գրանցման երկիրը ►	Հայաստանի Հանրապետություն
Ամբողջական հասցեն ►	ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94
Կայքէջը (առկայության դեպքում) ►	tashircity.am
Հիմնադրման տարեթիվը ►	2022 թվական , խոշորացված համայնք
Դիմորդի անունից իրավաբանական պարտավորություններ ստանձնելու իրավասություն ունեցող անձի (անձանց) անունները և պաշտոնը (պաշտոնները) ►	Էդգար Արշակյան ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավար

2. Կոնտակտային տվյալներ	
Կոնտակտային անձ ►	Նունե Սողոյան
Կոնտակտային անձի պաշտոնը ►	ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար
Էլ. փոստ ►	nune79@mail.ru
Հեռախոսահամար ►	098895141

3. Բանկային տվյալներ	
Բանկի անվանումը ►	ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Բանկի հասցեն ►	
Հաշվի սեփականատիրոջ անունը ►	ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան
Հաշվեհամարը (ներառյալ բանկային կոդը) ►	900274000034
IBAN (կամ BIC Կոդը) ►	

4. Դրամաշնորհային ծրագրերի իրականացման նախկին փորձ

Խնդրում ենք ստորև նշել վերջին 3 (երեք) տարվա ընթացքում միջազգային կազմակերպություններից ստացված դրամաշնորհները (եթե այդպիսիք կան): Խնդրում ենք նշել իրականացված կամ իրականացման փուլում գտնվող յուրաքանչյուր դրամաշնորհային ծրագրի անվանումը, իրականացման տարին(երը), նպատակները և թիրախային խմբերը/շահառուները: ▼

Ծրագրի անվանումը	Ժամկետը	Գումարը	Դոնոր	Շահառուներ
Ժողովրդավարական զարգացում, ապակենտրոնացում և լավ կառավարում Հայաստանում	2020	4625,11 €	Council of Europe	Տաշիր համայնքի բնակչություն
Կանաչ կառավարման մոդել	2023	1,800,000	UNDP	Տաշիր համայնքի բնակչություն
Բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման, էներգաարդյունավետության և էներգախնայողության միջոցառումներ	2024	43,529,000 ՀՀ դրամ	UNDP	Տաշիր համայնքի բնակչություն
«Միջհամայնքային կամ անդրսահմանային համագործակցության տեխնիկատնտեսական ուսումնասիրություններ»	2024	8000 €	Council of Europe	Տաշիր համայնքի բնակչություն
Հովդարա ջրամատակարարման համակարգի ակունքի հատվածի վերանորոգում	2024	72,844 \$	ՀՀ-ում ճապոնիայի դեսպանատուն	Տաշիր համայնքի բնակչություն

5. Ամփոփագիր (առավելագույնը՝ 1 էջ)

Այս մասում խնդրում ենք ներկայացնել առաջարկվող ծրագրի **ամփոփումը**՝ ներառյալ **խնդրի համառոտ շարադրանքը, նպատակներն ու խնդիրները, նախատեսվող շահառուները, հիմնական գործողությունները**, որոնք պետք է իրականացվեն, և **ակնկալվող արդյունքները**: Ձեզ խորհուրդ է տրվում ամփոփագիրը պատրաստել վերջում՝ համոզվելու համար, որ ներառել եք նշված բոլոր կետերը:



Շրջակա միջավայրի պաշտպանությունը, կենցաղային թափոնների կառավարումը ամբողջ աշխարհում և մասնավորապես Հայաստանում առաջնային լուծում պահանջող խնդիրներից են:

Տաշիր և Վանաձոր համայնքները բախվում են կենցաղային թափոնների անարդյունավետ կառավարման հետ կապված մարտահրավերների, ինչը հանգեցնում է աղբավայրերի ծավալների ավելացման, շրջակա միջավայրի աղտոտվածության և ռեսուրսների վերականգնման հնարավորությունների բաց թողնմանը: Իրազեկվածության պակասը և անբավարար ենթակառուցվածքները Տաշիրում սահմանափակում են համայնքի ներգրավվածությունը և թափոնների կառավարման կայուն գործընթացը:

«Կամրջող համայնքներ ավելի մաքուր քաղաքների համար» ծրագրի նպատակներ և խնդիրներ:

Տաշիր համայնքը արագ զարգացող համայնք է: Ներկա պահին համայնքի համար առաջնային խնդիր է հանդիսանում աղբահանությունը, աղբի տեսակավորումը, պլաստիկի ծավալների ավելացումը: Խնդիրն ավելի խորացավ համայնքի խոշորացումից հետո, երբ Տաշիրին միացան գյուղական համայնքներ:

Լինելով նաև տուրիզմի ուղղությամբ զարգացող համայնք անհրաժեշտություն կա հստակ մշակված ռազմավարությունների:

Այս ծրագրի առաջնային նպատակն է Տաշիր համայնքում իրականացնել հետազոտություններ, վերլուծություններ և ստեղծել կոշտ կենցաղային թափոնների կառավարման կայուն, համայնքային համակարգ՝ տեղայնացնելով և հարմարեցնելով ԵՄ կողմից ֆինանսավորված, Վանաձոր համայնքում մշակված, ավագանու կողմից հաստատված «Կոշտ կենցաղային թափոնների կառավարման»

ռազմավարությունը:

Նպատակները ներառում են.

- Կոշտ կենցաղային թափոնների կայուն կառավարման վերաբերյալ իրազեկվածության բարձրացում՝ նպատակային արշավների միջոցով, որպես թիրախ ընտրելով Տաշիրի դպրոցները և ՀՈԱԿ-ները:
- Վանաձորի համայնքում հաստատված «Կոշտ կենցաղային թափոնների կառավարման» ռազմավարության հարմարեցում Տաշիրի կարիքներին համապատասխան՝ կենտրոնանալով թափոնների տեսակավորման, վերամշակման վրա:
- Տաշիրի և Վանաձորի համայնքների միջև միջհամայնքային համագործակցության և փորձի փոխանակման խթանում:

Նախատեսված շահառուներ.

Ծրագրի անմիջական շահառուներն են Տաշիրի բնակիչները, 7-ից 12րդ դասարանի աշակերտները , ՀՈԱԿ -ների աշխատակիցները և 3-6 տարեկան երեխաները, ովքեր ձեռք կբերեն գործնական գիտելիքներ և գործիքներ թափոնների արդյունավետ կառավարման համար:

Վանաձորի համայնքային աշխատակիցները ԵՄ ծրագրի և այլ ծրագրերի ձեռք բերած փորձը և գիտելիքները կփոխանցեն Տաշիրի համայնքապետարանի աշխատակիցներին: Կստեղծվեն նոր համագործակցության ուղիներ: Հետագայում հնարավոր է նաև ծրագիրը տարածել Ստեփանավան խոշորացված համայնքում, ստեղծելով Վանաձոր-Ստեփանավան-Տաշիր աղբի տեսակավորման և կառավարման նոր մոդել:

Գործողություններ

1. Տաշիրում թափոնների կիրառման նախնական գնահատում
2. Տեղական շահագրգիռ կողմերի հետ քննարկումներ
3. Իրազեկման արշավներ Տաշիրի դպրոցներում և ՀՈԱԿ-ներում
4. Դպրոցականների միջև անցկացնել վիկտորինա՝ ամրապնդելու թափոնների կառավարման թեմայով
5. Աշխատել փորձագետի հետ՝ Վանաձորի «Կոշտ կենցաղային թափոնների կառավարման» ռազմավարությունը Տաշիրի համատեքստին հարմարեցնելու համար:
6. Կազմակերպել փորձի փոխանակման այցեր Տաշիրի և Վանաձորի թափոնների կառավարման պատասխանատուների և համայնքապետարանի աշխատակիցների միջև:
7. Մշակել ծրագիրը փաստող գործիքակազմ՝ հետագայում լավագույն փորձը կիսելու այլ համայնքների հետ:

Ակնկալվող արդյունքները.

Ծրագիրը կնպաստի համայնքի բնակիչների իրազեկվածության բարձրացմանը և ներգրավվածությունը թափոնների կառավարման գործընթացին, ինչի արդյունքում Տաշիրում կբարելավվի թափոնների տեսակավորումը, վերամշակումը : Այն կստեղծի թափոնների կառավարման համակարգ, որը նվազեցնում է աղբավայրերի օգտագործման և վերամշակման ծախսերը՝ բերելով տնտեսական և բնապահպանական օգուտներ: Բացի այդ, այն կստեղծի կրկնօրինակելի մոդել և կխթանի տարածաշրջանային համագործակցությունը բնապահպանական խնդիրների շուրջ՝ ուժեղացնելով ազդեցությունը Տաշիրից և Վանաձորից դուրս: Ծրագրի նպատակն է թողնել բնապահպանական պատասխանատվության և համայնքի վրա հիմնված կայունության մնայուն ժառանգություն:

6. Առաջարկվող ծրագրի նկարագրությունը (առավելագույնը՝ 3 էջ՝ առանց հավելվածների)

Ա. Հիմնահարցի ձևակերպում և հիմնավորում

Խնդրում ենք ստորև ներկայացնել առաջարկվող ծրագրի նկարագրությունը և հիմնավորումը: Ի՞նչ խնդիր(ներ) էք նախատեսում լուծել այս ծրագրով: Ո՞ր համայնքների համար: Եթե ձեր ծրագիրը նպատակ ունի ուսումնասիրելու մի շարք խնդիրներ, խնդրում ենք մանրամասնել բոլորը: Խնդրում ենք ներկայացնել հիմնախնդրի նշանակությունը՝ ապացույցներով (օրինակ՝ քանակական/որակական ապացույցներ, կարիքների գնահատում և այլն):



Այս դրամաշնորհային ծրագրի նպատակն է հիմնել կոշտ կենցաղային թափոնների կառավարման համատեղ նախաձեռնություն Վանաձոր և Տաշիր համայնքների միջև: Ծրագիրը կենտրոնացնում է տեղական կարողությունների զարգացմանը, հանրային իրազեկվածության բարձրացմանը և Վանաձորից թափոնների կառավարման հաջող ռազմավարության հարմարեցմանը Տաշիր համայնքի կարիքներին համապատասխան: Գործողությունները ներառում են կրթական արշավներ դպրոցներում և համայնքային կազմակերպություններում, փորձագիտական խորհրդատվություններ ռազմավարության տեղայնացման համար և փոխանակման ծրագիր՝ լավագույն փորձի փոխանակման համար: Այս գործողությունների միջոցով երկու համայնքներն էլ նպատակ ունեն նվազեցնել կենցաղային թափոնները, ուժեղացնել վերամշակման ջանքերը և խթանել շրջակա միջավայրի պահպանությունը: Կոշտ կենցաղային թափոնների կառավարման համագործակցային նախաձեռնությունն անդրադառնում է Վանաձոր և Տաշիր համայնքների առջև ծառացած մի քանի հիմնական մարտահրավերներին՝ կոշտ կենցաղային թափոնների արդյունավետ կառավարման հարցում: Ներկայումս այս համայնքները պայքարում են.

Հասարակության սահմանափակ իրազեկվածություն և ներգրավվածություն.

Տաշիրի շատ բնակիչներ չեն պատկերացնում թափոնների արդյունավետ կառավարման գործելակերպերը, ինչպիսիք են թափոնների տարանջատումը, վերամշակումը և կոմպոստացումը: Իրազեկվածության այս պակասը հանգեցնում է չտեսակավորված թափոնների մեծ ծավալների, ինչը մեծացնում է թափոնների կառավարման տեղական համակարգերի բեռը, նպաստում է շրջակա միջավայրի աղտոտմանը և հանգեցնում է աղբավայրերի օգտագործման ավելացմանը:

Թափոնների կառավարման անբավարար ենթակառուցվածք. Տաշիրը, ինչպես և շատ փոքր համայնքներ, ունի սահմանափակ ռեսուրսներ և ենթակառուցվածքներ՝ թափոնների արդյունավետ կառավարման համար: Մինչ Վանաձորը քայլեր է ձեռնարկել թափոնների կառավարման ռազմավարության մշակման ուղղությամբ, Տաշիրը դեռ պետք է կիրառի կառուցվածքային համակարգ, որը ներառում է թափոնների կրճատումը, տեսակավորումը, վերամշակումը և կոմպոստացումը: Ենթակառուցվածքների այս բացը սրում է համայնքում թափոնների կառավարման խնդիրը:

Կոշտ կենցաղային թափոնների կառավարման ռազմավարության բացակայություն. Տաշիրը ներկայումս չունի թափոնների կառավարման համապարփակ, համայնքին հատուկ պլան: Պարզապես Վանաձորի ռազմավարության կրկնօրինակումն առանց այն Տաշիրի յուրահատուկ կարիքներին հարմարեցնելն անարդյունավետ կլինի: Տաշիրի թափոնների հատուկ տեսակների, բնակչության դինամիկայի և առկա ռեսուրսների լուծման համար անհրաժեշտ է համապատասխան մոտեցում:

